Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի ԹԻՎ ԹԻՎ 114-118, ՄԱՐՏԻ 29-Ի ԹԻՎ ԹԻՎ 119-122, ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ ԹԻՎ 123, 124, ՄԱՐՏԻ 31-Ի ԹԻՎ ԹԻՎ 125-127, ԱՊՐԻԼԻ 1-Ի ԹԻՎ ԹԻՎ 128-130 ԵՎ ԱՊՐԻԼԻ 5-Ի ԹԻՎ 131 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 114-131 որոշումների հերթական համարներից անմիջապես հետո անհրաժեշտ է նշում կատարել որոշման իրավական ակտի բնույթի մասին։

Թիվ թիվ 114-118, 124, 126, 127, 129 և 130 որոշումների նախաբաններում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին։

Թիվ թիվ 119-122 որոշումների նախաբաններում «հաստատված» բառի փոխարեն անհրաժեշտ է գրառել «սահմանված» բառը։

Թիվ 123 որոշման վերնագրում համայնքի անվանումը թերի է գրառված, բացի այդ որոշումը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին։

Թիվ 125 որոշման նախաբանում «կետով» բառի փոխարեն անհրաժեշտ է գրառել «մասով» բառը, բացի այդ անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթին։

Թիվ 128 որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթին։

03.05.2022 թ.